«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի էությունը, առանձնահատկությունները,կիրառման եղանակները դասավանդման ընթացքում**

ՀԵՂԻՆԱԿ **Մագթաղ Գաբրիելյան**

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ **Դասվար**

ՂԵԿԱՎԱՐ **Արմենուհի Մելքոնյան**

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……3
2. Համագործակցային ուսուցման կազմակերպումը ……7
3. Համագործակցային մեթոդների դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործում……10
4. Եզրակացություն……..14
5. Օգտագործված գրականություն……15

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Մանկավարժական տեխնոլոգիաների հիմքում ընկած են հայեցակարգային դրույթներ, գաղափարներ, որոնք սահմանում են կրթադաստիարակչական գործընթացի բովանդակությունը, սուբյեկտների փոխազդեցության եղանակները, գործունեության ձևերը: Ցանկացած տեխնոլոգիա ձևավորվում, գործում և զարգանում է որոշակի նախադրյալների համատեքստում՝ սոցիալ-պատմական, սոցիալ-մշակութային, կոգնիտիվ, տնտեսական և այլն: Այն ենթադրում է մանկավարժական տեխնոլոգիաների զարգացման և կայացման հաջորդականությունն որոշող օրինաչափությունների առկայություն:

Մանկավարժական տեխնոլոգիան դիտարկում են որպես մանկավարժի հաջորդական գործողությունների համակարգ, որի նպատակը մանկավարժական խնդիրների լուծումն է, կամ էլ նախապես նախագծված մանկավարժական գործընթացի պլանաչափ և հաջորդական իրականացումը գործնականում

Անհարժեշտ է մանկավարժական տեխնոլոգիան տարբերել ուսուցման մեթոդիկայից: Տարբերությունը նրանում է, որ մանկավարժական տեխնոլոգիան վերարտադրելով, սահմանելով անպայման ապահովում է կրթադաստիարակչական գործընթացի բարձր արդյունավետություն, լուծում առաջադրված մանկավարժական խնդիրները, իսկ մեթոդիկան ու միշտ է ապահովում անհրաժեշտ որակը: Միևնույն ժամանակ մեթոդիկան կարող է հասնել տեխնոլոգիայի մակարդակին: Օր.՝ գոյություն ունի գիտելիքների գնահատման որոշակի մեթոդիկա և եթե այն բնորոշվում է օբյեկտիվությամբ, հուսալիությամբ, ապա կարելի է անվանել մանկավարժական տեխնոլոգիա:

Մանկավարժական տեխնոլոգիան փոխկապակցված է մանկավարժական վարպետության հետ: Մանկավարժական տեխնոլոգիայի կատարելապես տիրապետումը հենց մանկավարժական վարպետությունն է: Միևնույն տեխնոլոգիան կարող են կիրառվել տարբեր ուսուցիչների կողմից, սակայն դրա յուրահատուկ անհատական դրսևորումներն էլ հենց մանկավարժական վարպետության մասին են խոսում:

Մանկավարժական տեխնոլոգիական գործընթացի կազմակերպման սկզբունքները գործնականորեն կիրառվող մանկավարժական օրինաչափությունների, նպատակների, սկզբունքների, բովանդակության, ձևերի, մեթոդների, ուսուցման ու դաստիարակության միջոցների նախագծումն է, որն ապահովում է ուսուցման

որակը:Հարափոփոխ աշխարհում ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: համագործակցության ճանապարհով ձեռք բերված գիտելիքները ավելի կայուն են ավելի կիրառելի: Իսկ այս խնդիրը ավելի շատ լուծվում է ուսուցման ակտիվ մեթոդների միջոցով, որոնք հիմնականում ենթադրում են համագործակցային ուսուցում:

Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

 դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,

 բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,

 ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են.

դեմ առ դեմ փոխազդեցություն,

 դրական փոխկախվածություն,

անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,

 միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,

խմբային գործընթացի մշակում:

Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար:

Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներ

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ըստ կիրառման եղանակի ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են: Համագործակցային ուսուցման հիմքում տարբեր ուսումնական իրավիճակներում սովորողների համատեղ ակտիվ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գաղափարն է: Սովորողները միավորվում են խմբերում, նրանց տրվում է առաջադրանք, ընդ որում յուրաքանչյուրը պատասխանատում է ոչ միայն իր այլև ամբողջ խմբի աշխատանքի արդյունքի համար: Այդ պատճառով էլ ավելի թույլ առաջադիմություն ունեցող սովորողները ձգտում են սովորել: Արդյունքում աշխատում է ամբողջ դասարանը, քանի որ առաջադրված խնդրին միասնական լուծում են տալիս:

Համագործակցային եղանակով ուսուցում կազմակերպելու համար նախ և առաջինն որևէ սկզբունքով կազմում ենք թիմեր (Հաշվելու, որևէ հատկանիշի հիման վրա , որևէ նպատակարադրումից բխող և այլն) :

Առաջադրանքը շատ որոշակիորեն է հանձնարարվում (խնդիրը , աշխատանքների սկզբունքները , գործընթացը) :

Կազմակերպվում է թիմերին և դրանց անդամներին աջակցման գործընթաց :

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակա դեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Անհաժեշտությունից և նպատակահարմարությունից ելնելով՝ երբեմն վերադասավորվում են թիմերը և ամփոփիչ քննարկում կատարվում է ամբողև դասարանով :

Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Պետք է թիմում տրվի հանդուրժողականության , փոխադարձ հարգանքի , ակտիվության , լսելու և հաղորդակցման այլ կարողությունների դրսևորման , մտքերը հակիրճ արտահայտելու մթնոլորտ : Փորձը ցույց է տվել, որ

միասին սովորել է որ միայն հեշտ է, մատչելի, այլև հետաքրքիր և նշանակալիորեն արդյունավետ: Փոխօգնությունը, խնդիրների համատեղ լուծումը, հաջողության և անհաջողության կիսումը ձևավորում է բարոյական բարձր որակներ, որոնք պետք են ոչ միայն դպրոցում, այլև կյանքում: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը ուսուցչին հնարավորություն է տալիս ստեղծագործաբար մոտենալ ուսուցման գործընթացին, դասավանդվող առարկային, սովորողներին, նպաստում նրա մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության դրսևորմանը:

Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասինիրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Մեթոդաբանական առումով համագործակցային ուսուցումը հետևյալ սխեմատիկ բնույթն է կրում.

- Սովորողներն ընկալում են հանձնարարականները :
- Աշխատում են նախ ինքնուրույն ;
- Թիմի անդամներով փոխանակվում են ձեռք բերած արդյունքները :
- Քննարկում են և որոշում են ընդունելի արդյունքները :
- Աշխատանք են տանում որ թիմի բոլոր անդամները յուրացնեն նյութը և պատրաստ լինեն դրա փոխանցմանը:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետա-քրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար:

Համագործակցային մեթոդների դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործում

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ՝ համագործակցային մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են՝ պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Համագործակցային մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին

ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն) [3, էջ 163]:

Համագործակցային մեթոդների անվանման հիմքը համագործակցել բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում՝ ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ է տալիս: Հետագայում ավելի տարածվեց ինտերակտիվ մեթոդներ բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ: Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է, մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները անվանում են խմբային:

Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկն այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշկերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարներ ու մեթեդներ, որոնք բավական

արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվումէ խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը և ապահովել ուսուցմնա էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել հաղորդակցական ազատ միջավայր, անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: Եվ կրթական գործընթացում ուսուցման համագործակցային մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառուների ժամանակ: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորություները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից:

Եզրակացություն

Համագործակցային ուսուցումը ինքնուրույն, անհատական, շերտավորված աշխատանքների ամբողջություն է: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ըստ կիրառման եղանակի ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ:

Համագործակցային եղանակով ուսուցում կազմակերպելու համար նախ և առաջինն որևէ սկզբունքով կազմում ենք թիմեր (Հաշվելու, որևէ հատկանիշի հիման վրա , որևէ նպատակարադրումից բխող և այլն) :

Առաջադրանքը շատ որոշակիորեն է հանձնարարվում (խնդիրը , աշխատանքների սկզբունքները , գործընթացը) :

Կազմակերպվում է թիմերին և դրանց անդամներին աջակցման գործընթաց :

Մեթոդաբանական առումով համագործակցային ուսուցումը հետևյալ սխեմատիկ բնույթն է կրում.

- Սովորողներն ընկալում են հանձնարականները :
- Աշխատում են նախ ինքնուրույն ;
- Թիմի անդամներով փոխանակվում են ձեռք բերած արդյունքները :
- Քննարկում են և որոշում են ընդունելի արդյունքները :
- Աշխատանք են տանում որ թիմի բոլոր անդամները յուրացնեն նյութը և պատրաստ լինեն դրա փոխանցմանը:

Առաջարկություն

Կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն նպաստելու նպատակով պարբերաբար ուսուցումը կազմակերպել համագործակցային եղանակով՝ ապահովելով դրա բոլոր բաղադրատարրերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Ս.Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/,
2. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը
3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան,
4. Սարգսյան Վ. Ա., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ. Վ., Ձիլավյան Ե. Խ. << Մայրենի 3>> , Երևան , << Մակմիլան- Արմենիա>> հրատ., 2011,
5. Վարդումյան Ս., Ձաղինյան., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, <<Նայյան տապան>> հրատ